ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

(ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՍՍՀՄ-ի կազմավորումը, որի 50-ամյակը լրանում է այս տարվա դեկտեմբերի 30-ին, պատմական խոշորագույն իրադարձություն է մեր երկրի բոլոր ժողովուրդների կյանքում։ Այն նշանավորեց կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը և քաղաքական ու տնտեսական նախադրյալներ ստեղծեց մեր երկրի մոտ 130 տարբեր լեզուներ ունեցող ազգերի և ազգությունների փաստական անհավասարության վերացման, նրանց մերձեցման ու եղբայրական համագործակցության համար։ Առանց հասարակության սոցիալիստական վերակառուցման ազգային հարցի հետևողական լուծման մասին խոսք անգամ լինել չէր կարող։

Համաշխարհային պատմության մեջ եղել են դեպքեր, երբ մեկ պետության մեջ միավորվել են մի քանի և նույնիսկ տասնյակ ազգեր։ Սակայն այդ միավորումները կատարվել են բռնի կերպով, նրանցում ազգային հարաբերությունները կրել են տիրող և տիրապետվող ազգերի փոխհարաբերությունների բնույթ։ Աշխատավոր մասսաների սոցիալական ճնշմանը գումարվել է նրանց ազգային ճնշումը, որն առավել դառնացրել է փոքր ազգերի, հատկապես նրանց աշխատավոր զանգվածների վիճակը։ Պետական այդպիսի կազմավորման օրինակ կարող է ծառայել Ավստրոհունգարական կայսրությունը, որը փլուզվեց առաջին իսկ լուրջ փորձության ընթացքում։

ՍՍՀՄ-ի կազմավորումը պատահական երևույթ չէր։ Այն որևէ խոշոր ազգի կողմից փոքր ազգերին ու ազգություններին բռնի ենթարկելու միջոց չէր, այլ սովետական բոլոր ժողովուրդների պատմական զարգացման բնականոն արդյունք, որը թելադրված էր մեր բազմազգ պետության բոլոր ազգերի ու ազգությունների ազգային ու սոցիալական շահերի ընդհանրությամբ։ Դրանով է պայմանավորված սովետական բոլոր ժողովուրդների սոցիալիստական անխախտ ու կամավոր միությունը։

Վ. Ի. Լենինի կողմից ստեղծված կոմունիստական կուսակցությունը կարողացավ միավորել և մի ընդհանուր համաժողովրդական հունի մեջ ուղղել Ռուսաստանի բանվոր դասակարգի և բոլոր ճնշված ազգերի ազգային-ազատագրական շարժումները, որովհետև նա, լինելով հասարակության ամենաառաջավոր ուժի՝ բանվոր դասակարգի կուսակցություն, արտահայտում էր ոչ միայն վերջինիս, այլև Ռուսական կայսրության մեջ մտնող բոլոր ազգությունների աշխատավորների արմատական շահերը։

Ռուսական երեք հեղափոխությունների փորձը ցույց տվեց, որ բանվոր դասակարգը իշխանության կարող է հասնել իր ինտերնացիոնալ շարքերի հա-

մախմբման միջոցով և ազգային-ազատագրական շարժումների հետ սերտ դաշինքի մեջ մտած։ Առաջնակարգ նշանակություն տալով բանվորական հարցին, մարքսիզմ-լենինիզմը երբեք չի թերագնահատել ազգային հարցը, որը միշտ էլ եղել է մեր կուսակցության ուշադրության կենտրոնում։

Ժամանակակից բուրժուական գաղափարախոսները փորձում են ժխտել այդ փաստը։ Նրանք ճգնում են ապացուցել, որ կոմունիստները ձգտել են ազգային շարժումները ծառայեցնել ռուսական «մեծապետական» շահերին։ Ազգային-ազատագրական շարժումները հակադրելով բանվորական հեղափոխական շարժմանը, նրանք փորձում են ռուսական բանվոր դասակարգի ազատագրական միսիան նույնացնել ցարիզմի գաղութային քաղաքականության հետ։ Մյուս կողմից, ժամանակակից աջ և «ձախ» ռևիզիոնիստները փորձում են «հնացած» համարել սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսությունը, ժխտում են բանվոր դասակարգի ղեկավար դերը այդ հեղափոխության մեջ և «քննադատում են» Վ. Ի. Լենինին և մեր կուսակցությանը՝ ազգային հարցի «թերագնահատման» համար։

ՍՍՀՄ-ի կազմավորումը, միութենական և ինքնավար հանրապետությունների ստեղծումը, մեր երկրի բոլոր ազգերի և ազգությունների բուռն զարգացումը, նրանց տնտեսության ու մշակույթի համակողմանի ծաղկումը, բոլոր ազգերի աշխատավորների եղբայրական դաշինքը պայմանավորված են մեր հասարակարգի բնույթով և վկայում են սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հաղթանակի մասին, մեր երկրում լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի մասին։ Ո՛չ բուրժուական գաղափարախոսները, և ո՛չ էլ մարքսիզմի աջ և «ձախ» ռևիզիոնիստները չեն կարող կանգնեցնել առաջադիմական այն պրոցեսը, որ տեղի է ունենում միջազգային մասշտաբով՝ ՍՍՀՄ-ում ազգային հարցի լենինյան լուծման ազդեցության տակ։

* * *

Այնպիսի մի բազմազգ պետության մեջ, ինչպիսին ցարական Ռուսաստանն էր, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը հնարավոր էր միայն ազգային հարցի ճիշտ դրման, ազգայինի և ինտերնացիոնալի ճիշտ հարաբերակցության և դիալեկտիկական միասնության, ճնշված ազգերի ազգային-ազատագրական և բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի արմատական շահերի զուգորդման պայմաններում.

Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում հեշտացրեց ազգային մեկուսացման ոչնչացումը։ Ազգերի տնտեսական մերձեցման և ազգային սահմանափակվածության վերացման տենդենցը ավելի ուժեղացավ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին։ Այդ առաջադիմական պրոցեսն ընթանում էր դասակարգային սուր պայքարի պայմաններում։

Ցարիզմը ձգտում էր ոչ ռուս ժողովուրդների շահերը բռնի կերպով ենթարկել ռուսական բուրժուազիայի շահերին։ Դա առաջ էր բերում ազգերի բռնի միավորման ձևերի ոչնչացման, ազգերի անհավասարության և ազգային ճնշման վերացման տենդենց։ Այդ երկու հակադիր տենդենցների զարգացումը կամուրջ էր գցում ճնշված ազգերի ազգային-ազատագրական շարժումների և Ռուսաստանի բանվորական հեղափոխական շարժման միջև։

Սակայն Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման ամբողջ ժամանակահատվածում բուրժուական և բուրժուաազգայնա-

կան կուսակցությունները ձգտում էին հակադրել ճնշված ազգերի ազգային-ազատագրական շարժումները բանվորական հեղափոխական շարժմանը։ Այդ պատճառով էլ բուրժուական նացիոնալիզմը գնալով սոցիալիստական հեղափոխության ամենավտանգավոր հակառակորդն էր դառնում։

Ազգային հարցի ճիշտ դրվածքից, ինչպես նաև մեծապետական շովինիզմի և բուրժուական նացիոնալիզմի դեմ վճռական պայքար կազմակերպելուց էր կախված պրոլետարական հեղափոխության ռեզերվների օգտագործումը, տարբեր ազգերի բանվորների և չքավորության գյուղացիության դաշինքի ամրապնդումը։

Այդ պատճառով էլ Վ. Ի. Լենինը ազգային հարցի ճիշտ լուծումը համարում էր Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի կարևորագույն նախապայմաններից մեկը։ Նա անհեթեթություն էր համարում «զուտ» պրոլետարական հեղափոխության տեսությունը։

Խոսելով ազգային հարցի վերաբերյալ պրոլետարական կուսակցության խնդիրների մասին, Վ. Ի. Լենինը դեռևս 1917 թ. մայիսին նշում էր, որ «ազգային հարցում պրոլետարական կուսակցությունը պետք է պաշտպանի նախ և առաջ այն բոլոր ազգերի ու ժողովուրդների՝ Ռուսաստանից անջատվելու լիակատար ազատության հռչակումն ու անմիջական իրականացումը, որոնք ճնշված են ցարիզմի կողմից, բռնի կերպով միացվել են կամ բռնի կերպով պահվում են պետության սահմաններում, այսինքն՝ ենթարկված են անեքսիաների»[1]։

Բուրժուական գաղափարախոսները, խուսափելով ազգային հարցի վերաբերյալ կոմունիստական կուսակցության ծրագրային այդ գլխավոր պահանջի վերլուծությունից և այս կամ այն ազգի ազատ անջատման իրավունքի հարցը դիտավորյալ շփոթելով պարտադիր անջատման պահանջի հետ, ապարդյուն ջանքեր են թափում իրենց ընթերցողներին համոզելու, թե լենինյանները իշխանությունը վերցնելով իրենց ձեռքը, իբր հրաժարվեցին դրանից, հանդես եկան Սովետական Ռուսաստանից առանձին ազգերի անջատման և ինքնուրույն պետություններ ստեղծելու դեմ։ Որպես օրինակ նրանք մատնացույց են անում ՍՍՀՄ-ի կազմավորումը։ Բուրժուական գաղափարախոսների այդ հոգատարությունը ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտնող իրավահավասար ազգերի «անկախության» մասին նոր չէ, իհարկե։ Այն «թարմացվել է» միայն ՍՍՀՄ-ի կազմավորման կեսդարյա հոբելյանի համաշխարհային-պատմական նշանակության վրա ստվեր գցելու համար։

Կոմունիստները, և առաջին հերթին Վ. Ի. Լենինը, երբեք չեն թաքցրել, որ «եթե մենք անջատման ազատություն ենք պահանջում... առանց բացառության բոլոր ճնշված ու ոչ լիիրավ ազգերի համար, ապա բնավ ոչ այն պատճառով, որ մենք կողմնակից ենք նրանց անջատմանը, այլ միայն այն պատճառով, որ մենք կողմնակից ենք ոչ թե բռնի, այլ ազատ, կամավոր մերձեցմանն ու միաձուլմանը։ Միայն այդ պատճառով»[2]։

Հաղթանակած սոցիալիզմի երկրում ազգերի կամավոր միավորումն ու մերձեցումը բխում է ոչ թե այս կամ այն «տիրապետող», «իշխող» ազգի շահերից, այլ մի պետության մեջ միավորված բոլոր ազգերի տնտեսական ու

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 69։
2 Նույն տեղում, հատ. 23, էջ 78։

քաղաքական շահերից, նրանց համակողմանի զարգացման ու ծաղկման շահերից։

Վ. Ի. Լենինը մերկացնում էր նրանց, ովքեր փորձում էին հակասություններ գտնել ազգերի անջատման ազատության պրոպագանդայի և այդ ազատությունը իրականացնելու՝ կոմունիստների հաստատուն վճռականության միջև, երբ նրանք կկանգնեն կառավարության գլուխ։ «Ոչ մի «հակասություն» չկա և չի կարող լինել,— գրում էր Վ. Ի. Լենինը,— ազգերի անջատման ազատության պրոպագանդայի և այդ ազատությունը իրականացնելու հաստատուն վճռականության միջև, երբ մենք կլինենք կառավարություն— և ազգերի մերձեցման ու միաձուլման պրոպագանդայի միջև չկա և չի կարող լինել»[3]։

ՍՍՀՄ-ի գոյության կեսդարյա պատմությունը վառ կերպով ապացուցում է լենինյան այս դրույթը։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո ազգային հարցը կոմունիստական կուսակցության ներքին քաղաքականության ասպարեզում ոչ թե մղվեց ետին պլան, այլ առաջնակարգ պրակտիկ նշանակություն ստացավ։ Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում ազգային-պետական հարաբերությունների հարցը, բազմազգ սոցիալիստական պետության կազմավորման հարցը և՛ տեսական մշակման, և՛ պրակտիկ կիրառման տեսակետից կանգնեց կուսակցության ուշադրության կենտրոնում։ «Միայն կոմունիստական կուսակցությունը,— *ասված է ՍՍՀՄ-ի կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,*— որն արտահայտում է բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների կենսական շահերը, որը վարում է լենինյան ազգային քաղաքականություն, կարող էր բոլոր ազգերին ու ազգություններին համախմբել միասնական ինտերնացիոնալ եղբայրության մեջ և նրանց ջանքերն ուղղել նոր հասարակարգի ստեղծման նպատակին»[4]։

* * *

Պրոլետարիատի դիկտատուրայի դարաշրջանում բազմազգ սոցիալիստական պետության քաղաքական, տնտեսական ու կուլտուրական շինարարության հիմնական սկզբունքները մշակվել են Վ. Ի. Լենինի կողմից։

Իրավահավասար ժողովուրդների պետական կամավոր դաշինքի հիմքերը մեր երկրում դրվեցին դեռևս քաղաքացիական պատերազմների և օտարերկրյա իմպերիալիստների ռազմական ինտերվենցիայի դեմ մղվող պայքարի ընթացքում, երբ ազգային ու սոցիալական ազատագրման ուղին ոտք դրած մեր ժողովուրդները ռազմաքաղաքական դաշինքի մեջ մտան միմյանց հետ։ Առանց սովետական հանրապետությունների ամենասերտ դաշինքի և արտաքին քաղաքական գործունեության ամենասերտ կոորդինացման, հնարավոր չէր լինի պաշտպանել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները ներքին և արտաքին հակահեղափոխական մրցյալ ուժերի դավերից, վերականգնել երկրի ավերված արտադրողական ուժերը, բարձրացնել աշխատավորների բարեկեցությունը, ստեղծել միասնական սոցիալիստական տնտեսություն։ Այդ պատճառով էլ դեռևս 1920 թ. Վ. Ի. Լենինը, որը մեծագույն ծառայություն ունի

---

3 *Նույն տեղում, էջ 78—79։*

4 *«Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին։ ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը»։ Երևան, 1972, էջ 8—9։*

ՍՍՀՄ-ի ստեղծման գործում, գտնում էր, որ «անհրաժեշտ է ձգտել ավելի ու ավելի սերտ ֆեդերատիվ միության»[5]։

Թե ինչպիսի կենսական նշանակություն ունեցավ լենինյան այդ դիրքավորումը մեր երկրի ժողովուրդների կյանքում, կարելի է ցույց տալ Անդրկովկասի օրինակով։

Դասակարգային մարտերում ծնված Անդրկովկասի սովետական եղբայրական հանրապետությունների դաշինքը, նրանց ընդհանուր դաշինքը Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության հետ ամուր երաշխիք հանդիսացան արտաքին և ներքին թշնամիների դիմադրությունը հաղթահարելու և սոցիալիզմի հիմքերը կառուցելու համար։

Այսպես, երբ 1918 թ. գարնանը Տրապիզոնում և ապա Բաթումում «խաղաղության» բանակցություններ էին վարվում Թուրքիայի և Անդրկովկասյան սեյմի ներկայացուցիչների միջև, Թուրքիան որոշակի կերպով իր կամքը թելադրեց Անդրկովկասին, որովհետև կարողացավ պառակտում մտցնել վրաց մենշևիկների, դաշնակցականների և մուսավաթականների միջև։

1921 թ. աշնանը, երբ դեպքերի զարգացումը նորից կլոր սեղանի շուրջ հավաքեց Անդրկովկասի հանրապետությունների (այս անգամ՝ արդեն սովետական) և Թուրքիայի ներկայացուցիչներին, վերջիններս փորձեցին կրկնել 1918 թ. իրենց խաղերը։ Բայց առաջին իսկ քայլից նրանք զգացին, որ Անդրկովկասի սովետական հանրապետությունները կոնֆերանս են եկել միասնական ծրագրով։ Թուրքերի բոլոր փորձերը՝ առանձին-առանձին պայմանագրեր կնքել Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հետ, հաջողություն չունեցան։ Թուրքերին «հասկացրինք,— գրում է Գ. Կ. Օրջոնիկիձեն,— որ եթե նրանք ուզում են վայելել մեր համակրանքը... ապա նրանք պետք է մեզ դիտեն որպես մի միասնական ամբողջություն, որպես միասնական եղբայրական հանրապետություն։ Ադրբեջանցի ընկերները պահանջեցին նրանց կողմից հայերին ցույց արվող լավ վերաբերմունքի որոշակի ապացույցներ, և դա հիմնական պայմանը հանդիսացավ։ Այն ժամանակ նրանց համար մեկից պարզ եղավ, թե այստեղ ինչ է կատարվում»[6]։

Առանց Սովետական Ռուսաստանի օգնության Անդրկովկասի ժողովուրդները չէին կարող պաշտպանել իրենց ազգային շահերն ու սովետական հանրապետությունների անկախությունը։

Վ. Ի. Լենինը կարևորագույն նշանակություն էր տալիս սովետական նորաստեղծ բոլոր հանրապետությունների տնտեսական ջանքերի միավորմանը, առանց որի անհնար էր պատկերացնել երկրի քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնումն ու սոցիալիզմի հիմքերի կառուցումը։ Այսպես, դեռևս 1921 թ. ապրիլի 9-ին նա «համառորեն պահանջում» էր, «ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական օրգան»[7]։ Որպես սոցիալիզմին անցնելու միջոց, Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստների կարևորագույն խնդիրն էր համարում սովետական իշխանության պահպանումն ու զարգացումը, տարբեր ազգերի բանվորների և գյուղացիների միջև ազգային խաղաղության ամրապնդումը։ «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստա-

---

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 168։

6 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 109։

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 521։

նի, Լենականների հանրապետության կոմունիստ ընկերներին»՝ 1921 թ. ապրիլի 14-ի հղած նամակում մեծ առաջնորդը հույս էր հայտնում, որ Կովկասի սովետական հանրապետությունների «սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որ չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[8]։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի, նրա Կովկասյան բյուրոյի և ազգային կոմկուսակցությունների ամբողջ գործունեությունը նպատակամղված էր այդ խնդրի կատարմանը։ Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեցան Կովկասյան երկրային տնտեսական և առաջին կուսակցական խորհրդակցությունները (1921 թ. օգոստոս)։ Այդ խորհրդակցությունները կոնկրետ միջոցներ նշեցին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի բարձրացման, սովետական բոլոր հանրապետությունների տնտեսական ջանքերի միավորման, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի, ինչպես նաև սովետական հանրապետությունների պաշտպանունակության ամրապնդման համար։

Հատուկ ուշադրություն էր դարձվում ազգային հարցին։ «Ներքին քաղաքականության ասպարեզում,— ասվում էր կուսակցական խորհրդակցության բանաձևում,— առաջին պլան է մղվում աշխատավոր զանգվածների եղբայրական համերաշխության խնդիրը՝ տնտեսական սերտ համագործակցության հիման վրա»։ Խորհրդակցությունն ընդգծեց, որ Կովկասի հանրապետությունների անկախությունը կուսակցության համար ազգային սահմանափակվածության և հետամնացության դեմ պայքարելու գործոն է։ «Անկախությունը,— ասված է բանաձևում,— ամենևին էլ չի նշանակում Կովկասի աշխատավորների անջատում միմյանցից։ Պրոլետարական համերաշխության և բանվոր դասակարգի դիկտատուրայի ամրապնդման գործում Կովկասյան հանրապետությունները համերաշխ ու միաբան են»[9]։

Անդրկովկասի բանվոր դասակարգը, բոլոր աշխատավորները խորապես հասկանում և ջերմորեն պաշտպանում էին կուսակցության քաղաքականությունը։ Իսկ երբ սովետների համագումարներում, կուսակցական կոնֆերանսներում ու ժողովներում քննարկվում էր Անդրկովկասյան ֆեդերացիա ստեղծելու և ապա ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտնելու հարցը, մասսաները այն դիտում էին ոչ թե որպես իրենց հանրապետությունների «անկախության կորուստ», այլ որպես այդ անկախության պաշտպանման հուսալի երաշխիք։

Վ. Ի. Լենինը Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի ստեղծումը համարում էր սկզբունքորեն բացառձակապես նիշտ և գտնում, որ այդ ֆեդերացիան պետք է անպայման իրականանա։

Սովետական բոլոր հանրապետություններին հատուկ՝ ֆեդերատիվ միավորման բնական ձգտումը խորթ չէր նաև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական հանրապետությունների համար։ Կուսակցությունը, բանվոր դասակարգը վճռական հակահարված տվեցին ոչ միայն սովետական իշխանության բացահայտ թշնամիներին, որոնք քողարկվելով երկրամասի ժողովուրդների «ազգային անկախության» պաշտպանների դիմակով, ձգտում էին պառակտում մտցնել անդրկովկասյան հանրապետությունների ամրապնդվող դաշինքի մեջ, այլև կոմունիստական կուսակցությունների շարքերում հանդես

8 Նույն տեղում հատ. 32, էջ 402։
9 ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 64, ց. 2, գ. 7։

եկած նացիոնալ-ուկլոնիստներին, որոնք նույնպես «արխիկոմունիստական» ֆրազներով փորձում էին խանգարել այդ միավորմանը։

Սոցիալիզմի կառուցման գործում (ինչպես նաև սոցիալիստական հեղափոխության անցկացման ամբողջ ժամանակաշրջանում) Վ. Ի. Լենինը պահանջում էր կոմունիստներից՝ ճիշտ հասկանալ ինտերնացիոնալ և ազգային գործոնների փոխհարաբերության հարցերը, սոցիալիստական վերակառուցման ընդհանուր օրինաչափությունները և նրանց կիրառման ազգային ձևերի առանձնահատկությունները։ Վ. Ի. Լենինը երբեք շաբլոն մոտեցում չի ունեցել ազգային հարցի նկատմամբ և վճռական պայքար է ծավալել և՛ ազգային նիհիլիզմի, և՛ ազգային էգոիզմի դեմ, ազգային առանձնահատկությունները չի անտեսել ու չի տարրալուծել ընդհանուր օրինաչափությունների մեջ։

Դրա վառ ապացույցն է Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի նամակը։ Նրանում մեծ առաջնորդը Կովկասի կոմունիստներից պահանջում էր հասկանալ Անդրկովկասի հանրապետությունների յուրօրինակությունը, մեխանիկորեն չընդօրինակել ռուսական տակտիկան, հասկանալ կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը։ Լենինը հատուկ հոգատարությամբ էր վերաբերվում բանվորների ու գյուղացիների կարիքների նկատմամբ։ Նա պահանջում էր բոլոր ուժերով զարգացնել հարուստ երկրամասի արտադրողական ուժերը, իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքները, որպեսզի ինչ գնով էլ լինի բարձրացվի հողագործությունն ու անասնապահությունը, վերածնվի երկրամասը, թաղվի անցյալը, ամրապնդվի անցումը դեպի սոցիալիզմ։

1922 թ. մարտի 12-ին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեների միացյալ սեսիան որոշեց ստեղծել Անդրկովկասի Սովետական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միություն, որը դեկտեմբերին կայացած Անդրկովկասյան սովետների առաջին համագումարում վերակառուցվեց Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության։ Անդրֆեդերացիայի ստեղծումը և ՍՍՀՄ-ի կազմի մեջ նրա մտնելը պրոլետարական ինտերնացիոնալիզմի լենինյան սկզբունքների հիման վրա ազգային հարցի լուծման օրինակ է։

1924 թ. հունվարի 31-ին սովետների համամիութենական II համագումարը հաստատեց ՍՍՀՄ առաջին սահմանադրությունը, որի հիմքում ընկած էին մեր երկրի ժողովուրդների պետական կամավոր դաշինքի լենինյան սկզբունքները։ Բացի միութենական հանրապետություններից, ստեղծվեցին նաև ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ազգային օկրուգներ՝ փոքր ազգությունների ինքնավար իրավունքներն ապահովելու համար։ Այդ սկզբունքներն օրենսդրորեն վավերագրվեցին 1936 թ. դեկտեմբերի 5-ին ընդունված և ցայսօր գործող ՍՍՀՄ սահմանադրության մեջ։

* * *

ՍՍՀՄ-ի մեջ միավորված եղբայրական բոլոր ազգերի և ազգությունների տնտեսական ու կուլտուրական համակողմանի զարգացում, նրանց մերձեցում և եղբայրացում. սա է լենինյան ազգային քաղաքականության հիմնական նպատակը։ Այդ մերձեցումը, ինչպես նշեց ՍՄԿԿ XXIV համագումարը, տեղի է ունենում ազգային առանձնահատկությունները ուշադրությամբ հաշվի առ-

նելու, սոցիալիստական ազգերի կուլտուրաները զարգացնելու, ամբողջ Միության ընդհանուր շահերը և նրա մեջ մտնող հանրապետություններից յուրաքանչյուրի շահերը հաշվի առնելու պայմաններում։

Ժամանակակից բուրժուական գաղափարախոսները փորձում են կեղծել ՍՍՀՄ-ի ստեղծման պատմությունը, ժխտել նրա ինտերնացիոնալ բնույթը, ազգային հանրապետությունների անկախությունը։ Նենգափոխելով սովետական հասարակության պատմությունը, նրանք իրենց քաղաքական նպատակները կապում են ՍՍՀՄ-ում ազգային հարաբերությունների «սրման», կոմունիստական գաղափարախոսության «էվոլյուցիայի» հետ։

Իհարկե, այդ «գաղափարներն» ու «ձգտումները» առաջին թարմությամբ չեն բուրում։ Սակայն ժամանակին դրանց տրված հակահարվածը այսօր էլ արդիական հնչեղություն ունի։

Կես դար առաջ պրոլետարական ինտերնացիոնալիզմի մեծ ջատագով Գ. Կ. Օրջոնիկիձեն, հակահարված տալով սովետական հանրապետությունների միավորման հակառակորդներին, սպառիչ պատասխան է տվել այն հարցին, թե աշխատավորների շահերի տեսակետից ի՞նչ է նշանակում սովետական հանրապետությունների անկախությունը։ «Այդ հանրապետությունների անկախությունը,— ասել է նա,— մենք հասկանում ենք որպես ամենաբացարձակ անկախություն հակահեղափոխությունից, բայց մենք բացարձակապես անհնարին ենք համարում նաև սովետական հանրապետությունների անկախությունը միմյանցից և համաշխարհային հեղափոխությունից։ Սովետական հանրապետությունների շահերը անբաժանելիորեն հյուսված են միմյանց հետ... Առանց փոխադարձ տնտեսական և ռազմական օգնության սովետական հանրապետությունները գոյություն ունենալ չեն կարող»[10]։

Լենինյան ազգային քաղաքականության դեմ իրենց հարձակումների ժամանակ բուրժուական կեղծարարները, որպես փոքր ազգերի անկախության, նրանց ինքնորոշման իրավունքների «խախտման» փաստ նշում են ֆեդերատիվ միությունների (այդ թվում՝ ԱՍՖՍՀ-ի) ստեղծումը, ՍՍՀՄ-ի կազմավորումը։

Ամերիկյան պատմաբան Ք. Վոլտերն, օրինակ, իր «Ռուսաստանը և գաղութները» աղաղակող վերնագիրը կրող գրքում փորձում է ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտած սովետական եղբայրական հանրապետությունները ներկայացնել որպես «Ռուսաստանի գաղութներ»։ Նա ժխտում է կոմունիստական կուսակցության ինտերնացիոնալ բնույթը, համարելով այն միայն ռուսական, որը Հոկտեմբերյան հեղափոխության միջոցով «փորձեց նախ իր կամքը փաթաթել Ռուսական կայսրության բոլոր ազգությունների և ապա ամբողջ աշխարհի ազգերի վզին»։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, որի հուժկու հարվածների շնորհիվ սկսվեց համաշխարհային իմպերիալիզմի գաղութատիրության վերացման պրոցեսը, ըստ Վոլտերի, «Ռուսական մեռնող գաղութատիրությանը տվեց նոր մղում»[11]։

Ստանձնելով անդրկովկասյան բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների «փաստաբանի» դերը, Վոլտերը գովերգում է նրանց ստեղծած «անկախ» հանրապետությունները և II ինտերնացիոնալի լիդերներից ու բուրժուական նացիոնալիստներից կատարած մեջբերումներով փորձում է «գիտական» բնույթ տալ քաղաքական կեղտոտ նպատակներ հետապնդող իր ամբաստա-

---

10 Գ. Կ. Օրջոնիկիձե, նշվ. աշխ., էջ 72։

11 K. Wolter, Russia and her colonies, N. Y., 1952, էջ 7։

նագրերին։ Անդրֆեդերացիան նա համարում է մի «միջակա գործակալություն»։ Լենինյան ազգային քաղաքականության բուրժուական կեղծարարությանն են նվիրված Ռիչարդ Փոյփսի՝ «ՍՍՀՄ-ի կազմավորումը» (1954 թ.), Ալֆրեդ Լոուի՝ «Լենինը ազգային հարցի մասին» (1958 թ.), Դմիտրի Բուրսների՝ «Բոլշևիկները և ազգային-գաղութային հարցը» (1957 թ.), Ռոման Սմոլ-Ստոկի՝ «Սովետական Միության ազգային պրոբլեմը և ռուսական կոմունիստական իմպերիալիզմը» (1952 թ.), Դեն Ջեյկոբսի «Սովետական Միությունը— կոմունիզմի կես դարը» (1968 թ.) և բազմաթիվ այլ աշխատություններ։

Այս և այլ հեղինակներ միջոցների մեջ խտրականություն չեն դնում լենինյան ազգային քաղաքականությունն աղավաղելու համար։ Նրանց կոնցեպցիաները հակասովետական բնույթով հավասարազոր լինելով, շատ հաճախ իրենց «դիտական թեզերով» տրամագծորեն իրարամերժ են։ Այսպես, եթե վերը նշված Վոլտերը Անդրկովկասյան ֆեդերացիայի լիկվիդացումը բացատրում է նրանով, որ 1936 թ. այն արդեն «մեռնող մարմին էր» և որ «սովետական ցենտրալիզմը» արդեն բավականաչափ ուժեղ էր Մոսկվայից Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը ղեկավարելու համար[12], ապա Ֆրեդերիկ Բարգհուրնը իր «Սովետական Ռուսաստանի նացիոնալիզմը» աշխատության մեջ պընդում է, թե 1936 թ. «այս ֆեդերացիան պոտենցիալ վտանգ էր ներկայացնում Մոսկվայի քաղաքականության համար» և այդ պատճառով էլ այն լիկվիդացվեց[13]։

Բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունը իր հերթին փորձում է ժխտել այն փաստը, որ Անդրկովկասում ազգային խաղաղության հաստատման, սովետական իշխանության ամրապնդման գործում անգնահատելի դեր կատարեց սովետական եղբայրական հանրապետությունների դաշինքը, որը ամուր երաշխիք ստեղծեց սոցիալիզմի հիմքերի կառուցման և արտաքին ու ներքին թշնամիների դիմադրությունը հաղթահարելու գործում։

Դաշնակցական «տեսաբան» Լազյանը, կրկնելով հակակոմունիստների կեղծիքը, ՍՍՀՄ-ի կազմում Անդրկովկասյան հանրապետությունների մտնելը համարում է «այդ երկրներու անկախության վերջ» և «հայրենիքի դավաճաններ» անվանում բոլշևիկներին։ Բացահայտելով նման «հայրենասիրական» մոտիվների քաղաքական արմատները, Գ. Կ. Օրջոնիկիձեն ժամանակին նշել է, որ «ամեն անգամ, երբ տրորում են նացիոնալիստների, նացիոնալիստական ինտելիգենցիայի պոչը, նրանք անմիջապես սկսում են գոռալ, թե իրենց հակառակորդները հայրենիքի դավաճաններ են։ Թող դրանով մխիթարեն իրենց»[14]։

Կյանքը անհերքելիորեն ապացուցեց ազգայնամոլների կատարյալ սնանկությունը։ Սովետական իշխանության գոյության հենց առաջին հինգ տարիները վառ կերպով ցուցադրեցին սովետական ժողովուրդների եղբայրական դաշինքի բարերար արդյունքները ոչ միայն ազգամիջյան խաղաղության հաստատման, այլև ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման գործում։ Հարոլդ Բաքստոնը, որը քսանական թվականներին որպես «Նանսենի կոնսուլտատիվ կոմիտեի» անդամ քանիցս եղել է Անդրկովկասում, 1926 թ. Լոնդոնում հրատարակած իր «Անդրկովկաս» աշխատության մեջ նույնպես

12 Տե՛ս նույն տեղում, էջ 231։

13 Տե՛ս F. C. Barghoorn, Soviet Russian Nationalism, N. Y., 1956, էջ 31—32։

14 Գ. Կ. Օրջոնիկիձե, նշվ. աշխ., էջ 78։

ընդունում է, որ «երեք Հանրապետությունների ֆեդերացիան սովետական կառավարության ամենակարևոր նվաճումն է Անդրկովկասում»[15]։

* * *

Սոցիալիզմի կառուցման ընթացքում Սովետական Միությունում կազմավորվեցին սոցիալիստական ազգերը։ Դա էլ ավելի ամրապնդեց մեր ժողովուրդների լենինյան բարեկամությունը, որը դաժան քննություն բռնեց Հայրենական մեծ պատերազմում։ «Պատերազմը,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի վերոհիշյալ որոշման մեջ,— հօդս ցնդեցրեց համաշխարհային իմպերիալիզմի այն հույսերը, թե կվերածնվեն ազգային երկպառակությունները, թե փուլ կգա բազմազգ սոցիալիստական պետությունը»։ Պատերազմում տարած հաղթանակը վառ կերպով ցույց տվեց ՍՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամության կենսական մեծ ուժը։

Սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման տարիներին ՍՍՀՄ ժողովուրդների ստեղծած եղբայրական դաշինքը խարսխված է քաղաքական և սոցիալական միասնական սիստեմի հաղթանակի վրա, դասակարգային և ազգային հակամարտությունների իսպառ վերացման, միութենական պետականության և ազգային պետականության անխզելի միասնության, սոցիալիստական ազգերի և ազգությունների կուլտուրաների ու ժողովրդական տնտեսության համակողմանի զարգացման, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության լենինյան գաղափարախոսության վրա։

Սովետական յուրաքանչյուր ազգ և ազգություն իր սեփական փորձի վրա զգում է ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքին պատկանելու բարերար ազդեցությունը։ Մի՞թե, օրինակ, այնպիսի մի ժողովուրդ, ինչպիսին հայ ժողովուրդն է, որ դարեր շարունակ ենթարկվել է օտար նվաճողների ասպատակություններին և կորցրել իր պետականությունը, կարող էր երազել սոցիալիստական ազատ ու անկախ պետականության մասին, եթե նրան եղբայրական օգնության ձեռք չմեկնեին սովետական մյուս ժողովուրդներն ու առաջին հերթին՝ ռուս մեծ ժողովուրդը։

Ո՞ր հայը կարող էր երազել, որ պատմական այնպիսի մի կարճ ժամանակահատվածի վերջում, ինչպիսին 50 տարին է, քայքայված, ավերված, որբերի ու արցունքի երկիր դարձած իր հայրենիքը կարող էր 1970 թ. արտադրել ավելի քան վեց միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա և դրանով իսկ երեք անգամ գերազանցել ցարական ամբողջ Ռուսաստանի 1913 թ. մակարդակը։ Եթե նրա ժողովրդական տնտեսությունը չկազմեր ՍՍՀ հզոր Միության բաղկացուցիչ մասը։

1920 թ. Մայիսյան հերոսական ապստամբությունը ճնշելուց հետո դաշնակցական բախտախնդիրներն իրենց գաղափարական ամբողջ զինանոցը գործի դրեցին՝ սովետական իշխանության գաղափարը վարկաբեկելու համար։ Ոչ անհայտ դաշնակցական լիդեր Ռուբեն Դարբինյանը «Հառաջում» տպագրած իր հակասովետական հոդվածաշարում այն ժամանակ չարախնդորեն հարց էր տալիս. «Որտեղի՞ց պիտի գտնեն մեր տնաբույս բոլշևիկները այն մեծ կապիտալը, որով նրանք ի վիճակի լինեն ձեռք բերել... լծկաններ, գյուղատնտեսական գործիքներ։ Որտեղի՞ց պիտի ստանան հայ բոլշևիկ կոչվածները այն խո-

[15] Rev. H. Buxton, Trans-Caucasia, London, 1926, էջ 91։

շոր կապիտալը, որով կարելի լինի կարգի բերել մեր քայքայված հաղորդակցության միջոցները...»։

Իսկապես, հայ բոլշևիկները որտեղի՞ց ձեռք բերեցին այն իրոք մեծ կապիտալը, որը հնարավորություն տվեց «լծկանների» փոխարեն հայրենի հողի վրա հանել 18 հաղար տրակտոր, 1700 կոմբայն, ստեղծել ջրանցքների խիտ ցանց, էլեկտրիֆիկացնել գյուղատնտեսական աշխատանքները, կառուցել մոտ 700 արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, 1913 թ. համեմատությամբ 180 անգամ ավելացնել արդյունաբերության արտադրանքը, հիմնովին վերակառուցել գյուղերն ու քաղաքները, հաղորդակցության միջոցները, հիմնել տասնյակ բուհեր ու հազարավոր դպրոցներ, լիովին վերացնել անգրագիտությունը և Հայաստանը դարձնել Միության գիտական մտքի կենտրոններից մեկը։

Այս «հրաշքը» կարող էր կատարվել և կատարվեց միայն սովետական իշխանության պայմաններում։ Հայ ժողովուրդը իր ազգային վերածնության, իր ազգային վերաշինության գործում ստացավ Սովետական Միության եղբայրական բոլոր ժողովուրդների անշահախնդիր օգնությունը։ Իր հերթին հայ ժողովուրդը իր արդար քրտինքով էական ներդրում ունի մեր հզոր հայրենիքի վերելքի գործում։ 1969 թ. Սովետական Միության հասարակական արտադրության մեջ Սովետական Հայաստանի բաժինը կազմում էր՝ մետաղահատ հաստոցների արտադրության 5,4 տոկոսը, ավտոդողերի՝ 4,7 տոկոսը, կենցաղային առարկաների՝ 2,4 տոկոսը, գուլպայի ու կիսագուլպայի արտադրության՝ 3,3 տոկոսը, գինու՝ 3,1 տոկոսը և այլն։

Սովետական Հայաստանը բացառություն չէ։ Նրա ծաղկումն ու բարգավաճումը սոցիալիզմի զարգացման օբյեկտիվ օրինաչափության արտահայտությունն է։ Սովետական բոլոր հանրապետությունները տնտեսական ու քաղաքական հազարավոր անխզելի թելերով կապված են իրար հետ և փոխադարձաբար պայմանավորում են միմյանց զարգացումը։

Սովետական բոլոր ազգերի ու ազգությունների համակողմանի զարգացումը ոչ թե վերացնում է ազգային ինքնօրինակությունը, այլ, ընդհակառակը, նպաստում է ընդհանուրի շահերին համապատասխանող ազգային մշակույթի և բնավորության առաջադեմ ավանդույթների զարգացմանը։ Դրա լավագույն ապացույցն է այն փաստը, որ ՍՍՀՄ դպրոցներում ու բուհերում դասավանդումը իրականացվում է ազգային 58 լեզուներով։ Սոցիալիստական ազգերի հարաբերությունները զարգանում են ազգային միջնորմների վերացման, նրանց մշակույթների համակողմանի զարգացման, փոխադարձ կապերի ու բարեկամության ամրապնդման ուղիով։

«Մենք,— նշել է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը,— մեր կարևոր խնդիրն ենք համարում մեր բազմազգ երկրի բոլոր ազգերի և ազգությունների դաշինքի հետագա ամրապնդումը»[16]։

Կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության էությունն այն է, որ զարկ է տրվում բոլոր ազգերի հետագա զարգացման և մերձեցման իրար պայմանավորող տենդենցներին, օրըստօրե ամրապնդվում է սոցիալիստական ազգերի ներքին միասնությունը։ Արտադրության միջոցների հանրային սեփականության բազայի վրա տեղի է ունենում միատիպ սոցիալական կա-

16 Տե՛ս «Պրավդա», 8 հունիսի, 1969։

ռուցվածք և միասնական մարքս-լենինյան գաղափարախոսություն ունեցող բոլոր ազգերի ու ազգությունների, սովետական ամբողջ ժողովրդի կացութաձևի ինտերնացիոնալացումը, որն իր հերթին խոշոր ազդակ է հանդիսանում նրա բարոյաքաղաքական միասնության ամրապնդման համար։ Ազգայինն ու առանձնահատուկը զարգանում են ոչ թե որպես համասովետականի հակոտնյա երևույթ, այլ որպես նրա արտահայտության ձև, որպես համասովետականի փոխհարստացման միջոց։

Սովետական բազմազգ պետության կառուցման փորձը, մեր երկրում զարգացած սոցիալիստական հասարակարգի ստեղծումը, լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանակը փայլուն կերպով վկայում են ոչ միայն այն, որ ՍՍՀՄ-ը պատմականորեն իրեն լրիվ արդարացրած պետական ձև է, այլև այն, որ այդ միությունը միակ և հուսալի երաշխիքն է մեր երկրում կոմունիզմի կառուցման, բոլոր ազգերի ու ազգությունների հետագա մերձեցման, նրանց ժողովրդական տնտեսության և մշակույթի համակողմանի զարգացման համար։ Հենց ՍՍՀՄ-ի գոյությունը, սոցիալիստական ազգերի կուլտուրաների փոխազդեցության և փոխհարստացման անընդհատ պրոցեսը պայմանավորեցին և հնարավոր դարձրեցին մարդկանց պատմական այնպիսի նոր ընդհանրության հանդես գալը, ինչպիսին սովետական ժողովուրդն է՝ իր հոգևոր կերպարի ընդհանրությամբ։

Մեր երկրի առաջ կանգնած այնպիսի վիթխարի պրոբլեմները, ինչպիսիք են կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցումը, աշխատավորների կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի հետագա վերելքի ապահովումը, նոր մարդու կոմունիստական դաստիարակությունը, կարող է լուծել միայն սովետական ժողովուրդը՝ իր ձեռքում կենտրոնացնելով բազմազգ սովետական տերության ամբողջ հզորությունը։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության 9-րդ հնգամյակի առաջին տարվա արդյունքները ցույց են տալիս, որ ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումները հաջողությամբ իրագործվում են։ Բավական է նշել, որ հնգամյակի առաջին տարին մեր ժողովրդական տնտեսությանը բերեց 5 միլիարդ ռուբլու գերպլանային արդյունաբերական արտադրանք, 180 մլն տոննա հացահատիկ։ Կենսագործվում են ժողովրդի բարեկեցության բարձրացման համար նախատեսված բոլոր միջոցառումները։ Այս ամենը կրկին անգամ վկայում է ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական դաշինքի կենսական ուժը։

Սովետական մարդիկ համոզված են, որ կուսակցության այսօրվա կանխագծումները վաղը անպայման իրականություն են դառնալու և նոր ասպարեզ են բացելու մեր երկրի բոլոր ազգերի ու ազգությունների հետագա ծաղկման համար։ Այդ է պատճառը, որ ՍՍՀՄ պետական միավորումը գնալով ոչ թե կորցնում է իր նշանակությունը, ոչ թե խոչընդոտ է հանդիսանում սոցիալիստական ազգերի տնտեսության ու մշակույթի հետագա զարգացման ու մերձեցման համար, այլ, ընդհակառակը, որպես պետական միավորման առավել կենսունակ ու կատարելագործված ձև, պայմանավորում և խթանում է զարգացման ու մերձեցման այդ պրոցեսը։ Եվ բնական է սովետական ամբողջ ժողովրդի, բոլոր ազգերի ու ազգությունների անշեղ ձգտումը՝ անընդհատ ամրապնդել ՍՍՀՄ-ի տնտեսական, քաղաքական ու ռազմական հզորությունը։

Սովետական սոցիալիստական յուրաքանչյուր ազգ, մեծ թե փոքր, իր համազգային շահերի պաշտպանությունը տեսնում է համասովետականի պաշտ-

պանության ու զարգացման մեջ։ Սա է սովետական ժողովրդի բարոյաքաղաքական միասնության հիմքը, որը և պայմանավորում է սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ու սովետական հայրենասիրության էությունը։

Հայրենական պատերազմի տարիներին Լենինգրադի մատույցներում թե Կերչի թերակղզում հայը, պաշտպանելով սովետական մեր հզոր երկրի շահերը, դրանով իսկ պաշտպանում էր նաև իր ժողովրդի շահերը, նրա անկախությունն ու ազատությունը։ Եվ այսօր լենինգրադցի հորատող բանվորը, ուկրաինացի ինժեները, բելոռուս էքսկավատորավարը, լինի դա Արփա-Սևանի շինարարությունում (որի աշխատանքներին մասնակցում են սովետական 40 ազգերի ներկայացուցիչներ), Ղազախստանում յուրացվող խամ ու խոպան հողերում թե մի այլ վայրում, կրկնապատկում են մեր միասնական ու հզոր հայրենիքի փառքը։ Եվ դա առանձին անհատների բնավորության դրսևորում չէ։ Դա սովետական ժողովրդի բնավորությունն է, որը ստեղծվել է սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման ընթացքում։

Երբ արտասահմանում սովետական մարդուն հարցնում են նրա ով լինելը, պատասխանը լինում է՝ ես սովետական քաղաքացի եմ։ Այդ պատասխանն արտահայտում է սովետական ազգերի ներքին միասնությունը, նրանց բնավորության ընդհանրությունը։

Սա պատմական խոշորագույն հաղթանակ է, հեղափոխություն մարդկանց գիտակցության մեջ, որը իրականացվել է կոմունիստական կուսակցության ամբողջ գործունեության հետևանքով։

Սովետական ժողովրդի ինտերնացիոնալ դաստիարակությունը, ազգերի և ազգային հարաբերությունների հետագա զարգացումը եղել են և մնում են կոմունիստական կուսակցության ուշադրության կենտրոնում։ Կուսակցությունը միշտ էլ պայքար է մղել ինչպես նացիոնալիզմի և շովինիզմի մնացուկների, ազգային սնապարծության և էդոիզմի ամեն տեսակ դրսևորումների, այնպես էլ ազգային նիհիլիզմի դեմ, քանի որ դրանք խոչընդոտում են մեր առաջընթացը։

«Բազմազգ սովետական ժողովուրդը,— *ասված է ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,—* ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակը դիմավորում է որպես հզոր, միաձույլ համախմբված ժողովուրդ, որը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ վստահորեն և նպատակասլաց կերպով առաջ է ընթանում կուսակցության ծրագրի, ՍՄԿԿ XXIV համագումարի կողմից նախանշված ուղիով»։

ТОРЖЕСТВО ЛЕНИНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ

(К 50-летию образования СССР)

Член-корр. АН Арм. ССР Г. А. ГАЛОЯН

(Резюме)

В статье на конкретном историческом материале раскрывается сущность ленинской национальной политики КПСС. Подчеркивается большое внимание В. И. Ленина к национальному вопросу как в период подготовки и проведения социалистической революции, так и в годы социалистического строительства.

В. И. Ленин придавал огромное значение объединению экономических усилий молодых советских республик, их федеративному объединению. Создание Закфедерации и ее вхождение в СССР является одним из примеров торжества ленинской национальной политики.

Опыт 50-летнего существования СССР показывает незыблемость принципов пролетарского интернационализма политики КПСС. Всесторонний расцвет экономики и культуры союзных республик является результатом их вхождения в великий союз народов СССР. Решения XXIV съезда КПСС показывают решимость партии и в дальнейшем проводить политику всестороннего расцвета и сближения наций и народностей Советского Союза.

Разоблачая фальсификацию буржуазными идеологами истории образования СССР и национальной политики КПСС, автор показывает, что только Советская власть и Коммунистическая партия принесли народам СССР мир, дали им возможность встать на путь национального возрождения, создать свою национальную по форме и социалистическую по содержанию культуру.

50-летний опыт существования СССР бесспорно доказывает жизнеспособность системы советской государственности, где интересы каждой нации гармонически сочетаются с интересами всего советского народа. Этим и объясняется стремление всех наций и народностей нашей Родины к дальнейшему укреплению и упрочению великого содружества народов СССР.